ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԴԻԱՆԱ ՀՈՎԻԿԻ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԼՐԱԳՐՈՂԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն) » մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան- 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
Սրբուհի Ռաֆիկի Գևորգյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
Նաիրա Ռաֆիկի Հակոբյան

հոգեբանական գիտությունների թեկնածու
Լիդա Ռազմիկի Արամյան

Առաջատար կազմակերպություն՝ Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի մայիսի 25-ին, ժամը 12-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ- ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2017 թվականի ապրիլի 25-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների դոկտոր Կ. Ե.Վարդանյան

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Թեմայի արդիականությունը:Հոգեբանական պատրաստվածության հիմնախնդիրը առաջին հերթին պայմանավորված է հոգեբանական կայունության, տագնապայնության, ագրեսիայի և կոնֆլիկտների դրսևորման տեսափորձառական հետազոտություններով, որոնք առավելագույնս բնորոշ են արտակարգ իրավիճակներում հայտնված սուբյեկտներին: Մասնագիտական պիտանիության առումով, իրենց կարգավիճակով և հիմնական գործառույթներով նրանք պետք է բավարարեն հոգեբանական պատրաստվածության ժամանակակից պահանջներին: Լրագրողի հոգեբանական պատրաստվածության համակարգը, հատկապես արտակարգ իրավիճակներում, կարիք ունի հիմնավոր և համակողմանի ուսումնասիրության: Այն շատ կարևոր է նաև լրագրողների առողջության և ներդաշնակ հոգեկան վիճակի պահպանման համար, քանի որ երբեմն ողբերգական իրավիճակներում աշխատելիս նրանք ունենում են հոգեբանական աջակցության կարիք: Ընտրված թեման արդիական է լրագրություն մասնագիտությամբ կրթական ծրագրերում առավել կոմպետենտային մոտեցման ներդրման տեսանկյունից: Տվյալ ուսումնասիրությունը հիմնավորվում է սոցիալական նշանակությամբ, քանի որ լրագրողների կողմից արտակարգ իրավիճակներում աշխատելու և իրադարձությունների լուսաբանման արհեստավարժության ու բարոյական ուղղվածությունն անմիջականորեն ազդում է հասարակության սոցիալ-հոգեբանական լարվածության, նրանց առողջության և աշխարհընկալման վրա:

Հետազոտության օբյեկտը արտակարգ իրավիճակներում ներառված սուբյեկտների հոգեբանական պատրաստվածության գործընթացն է:

Հետազոտության առարկան արտակարգ իրավիճակներում լրագրողի հոգեբանական պատրաստության համակարգն է :

Հետազոտության գիտական վարկածն է. արտակարգ իրավիճակներում աշխատող և տեղեկատվություն հաղորդող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության անհրաժեշտ մակարդակի ապահովումը հնարավոր է արտակարգ իրավիճակների պայմաններում աշխատող և լուսաբանող լրագրողների վրա հոգեբանական ազդեցության, նրանց հոգեբանական պատրաստվածության և նրանց կողմից հասարակությանը տրվող տեղեկատվության ազդեցությունը կառավարելի դարձնելու պայմաններում, ինչը լրագրողների աշխատանքներում առաջացող սոցիալ-հոգեբանական խնդիրները կդարձնի կառավարելի, իսկ սոցիալ-հոգեբանական գիտելիքների իմացությունը կապահովի աշխատանքի համակարգվածությունը:

Հետազոտության նպատակն է՝ հետազոտել արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի հոգեբանական պատրաստվածության մակարդակը, մշակել դրա բարձրացման ուղիների, ձևերի և միջոցների համակարգ:

Հետազոտության նպատակից և վարկածից բխում են հետևյալ **խնդիրները.** ուսումնասիրել ու համեմատել արտերկրում և ՀՀ-ում արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանական պատրաստության գործընթացները ու մեխանիզմները, ուսումնասիրել արտակարգ իրավիճակների պայմաններում լրագրողների վրա թողնված հոգեբանական ազդեցությունը, բացահայտել արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանական

պատրաստվածության և բնակչության վրա նրանց կողմից լուսաբանվող տեղեկատվության հոգեբանական ազդեցության կապը, բացահայտել տպագիր, էլեկտրոնային լրատվության միջոցներում և հեռուստատեսությունում աշխատող լրագրողների աշխատանքներում առաջացող հոգեբանական խնդիրները և դրանց առանձնահատկությունները, կազմել արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանական պատրաստության դասընթացի ծրագիր:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերն են. փիլիսոփայության, սոցիալական հոգեբանության հիմնարար տեսական ուսումնասիրությունները, սոցիալական հոգեբանության մեթոդական համակարգը, օրինաչափությունները, հոգեկանի ուսումնասիրման և համակարգային մոտեցման սկզբունքները և կառուցվածքահամակարգային ու գործառութային պատկերացումները, Զ.Ֆրեյդի, Կ.Յունգի, Կ.Հորնիի, Կ. Բոուլդինգի, Մ. Հոլսթեյն-Բեկի հայեցակարգային մոտեցումները, արտակարգ իրավիճակներում անձի սոցիալ-հոգեբանական հարմարման վերաբերյալ Մ.Մկրտումյանի և Յու.Ա.Ալեքսանդրովսկու հայեցակարգային դրույթները, ինչպես նաև միջազգային ճանաչում ունեցող բազմամյա փորձառությամբ լրագրող Մարկ Բրեյնի՝ հետազոտական աշխատանքների հոգեբանական վերլուծությունները, արտակարգ և զանգվածային լրատվության միջոցներին վերաբերող իրավական նորմատիվային փաստաթղթերը, միջազգային պրակտիկայում գործող լրագրողական վարքագծային նորմերը:

Հետազոտության մեթոդներն են. տեսական հետազոտության մեթոդներ՝ հիմնախնդրի վերաբերյալ կուտակված համաշխարհային փորձի համեմատություն, փորձարարական մեթոդներ՝ հարցաթերթ, թեստ, հարցազրույց, փորձագիտական գնահատում, գործունեության արդյունքների համեմատական վերլուծություն, Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան» (16-PF), Սպիլբերգեր-Խանինի «Ինքնագնահատման ախտորոշման Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի» մեթոդիկան, Ա.Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան», Թեյլորի «Տագնապախոռովության չափման» մեթոդիկան:

Հետազոտության գիտական նորույթն է. Առաջին անգամ մեր իրականությունում լրագրության ոլորտում նորովի է բացահայտվել արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ- հոգեբանական պատրաստվածության հիմնախնդիրը: Արտակարգ իրավիճակներում սուր արտահայտված տագնապայնությունը, ագրեսիվ վարքի դրսևորումները, նյարդային լարվածությունը, հնարավոր կոնֆլիկտները և հուզական անկայությունը բացասաբար են անդրադառնում կոնկրետ իրավիճակում լրագրողի կողմից տեղեկատվության ստացման, մշակման և մատուցման գործընթացների վրա, դրանով թուլացնելով 'լրագրող-հասարակություն' կապը, որը հնարավոր է բարձրացնել ի հաշիվ լրագրողի սոցիալ-հոգեբանական պատրաստվածության:

Հետազոտության տեսական նշանակությունը. հարստացնում և ընդլայնում է տեսական պատկերացումները սոցիալական հոգեբանության ոլորտում, հիմնավորում է արտակարգ իրավիճակներում աշխատող սուբյեկտների հոգեբանական պատրաստվածության մակարդակը և համակարգի կայացման անհրաժեշտությունը: Մեր իրականության մեջ առաջին անգամ հետազոտական աշխատանքի տվյալների հիման վրա բացահայտվել և գիտականորեն հիմնավորվել են արտակարգ

իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանական պատրաստվածության անհրաժեշտությունը, հրատապությունը, առանձնահատկությունները, սկզբունքները, մեթոդները, տեղեկատվության որակական և քանակական չափորոշիչները, դրա սոցիալ-հոգեբանական ուղղվածությունը: Արտակարգ իրավիճակի պայմաններում տեղեկատվության կառավարման յուրահատկությունը, բացահայտումն ու վերլուծումը անհրաժեշտ ուսումնական նյութ է լրագրություն մասնագիտությամբ սովորող ուսանողների համար: Այն պատրաստի վերլուծություն է սոցիալական և արտակարգ իրավիճակների հոգեբանության և լրագրողների պատրաստման գործընթացի զարգացման հիմնախնդիրներով զբաղվող հետազոտական աշխատանքների համար:

Հետազոտության գործնական նշանակությունն է. հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակված «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» բուհական դասընթացի ծրագիրը կնպաստի բուհերի կամ միջին մասնագիտական հաստատությունների լրագրություն մասնագիտությամբ շրջանավարտ և արդեն լրագրողական գործունեություն իրականացնող լրագրող-մասնագետների հոգեբանական պատրաստվածության ապահովմանն ու առկա մակարդակի զարգացմանը, արտակարգ իրավիճակներում լրագրողական աշխատանքի մեթոդաբանության փոփոխությանը, նրանց սթրեսակայունության մակարդակի բարձրացմանը:

Հետազոտության հուսալիությունն ու հավաստիությունը. կատարված հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովված են հոգեբանական հետազոտությունների ժամանակակից մեթոդաբանական սկզբունքներով, հետազոտության առարկային, նպատակին և խնդիրներին համապատասխան կիրառված փոխադարձաբար իրար լրացնող մեթոդներով: Հետազոտության հիմնական արդյունքների փորձարկումն ու ներդրումը կատարվել է երկրորդ և երրորդ փուլերում: Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել և քննարկվել են Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի նիստերին, ինչպես նաև հանրապետական ու միջազգային գիտաժողովներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են.

1.Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանական պատրաստվածության հիմնախնդիրն, իր տեսական վերլուծություններով և մեթոդաբանական հիմնավորումներով, պահանջում է որոշակիություն՝ հասարակությանը արտակարգ իրավիճակներում տրված տեղեկատվության տեսանկյունով, և, այդ առումով, իր բնորոշ առանձնահատկություններով տարբերվում է այլ իրավիճակներում հաղորդվող տեղեկատվության ազդեցության դրսևորումներից:

2.Արտակարգ իրավիճակներում աշխատող և տեղեկատվություն ապահովող լրագրողներն ունեն հոգեբանական յուրատիպ դրսևորումներ, որոնք պայմանավորված են տվյալ արտակարգ իրավիճակի պայմաններում հասարակությանը հաղորդվող ու ներկայացվող տեղեկատվության բնույթից և լրագրողի՝ որպես սուբյեկտի, անձնային գործոններից:

3.Արտակարգ իրավիճակներում աշխատող և տեղեկատվություն ապահովող լրագրողների և հասարակության միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները

հատկանշվում են յուրատիպ հոգեբանական առանձնահատկություններով: Լինելով խոցելի՝ ենթարկվում են երկկողմանի ազդեցության՝ «ուղղահայաց և հորիզոնական»՝ ձևավորելով երկբնույթ փոխազդեցություն: Վերջինիս արդյունքում լրագրողները ցուցաբերում են ագրեսիվություն, տագնապայնություն՝ շփվողականության բարձր աստիճանով, արտահայտչականության որոշակի ցուցանիշով, ինքնավերահսկողության սուբյեկտիվ ընկալման բարձր աստիճանով, ոչ համարժեք ինքնագնահատականով, ինչի արդյունքում շատ հաճախ խաթարում և խեղաթյուրում են տեղեկատվությունը: 4.Խմբավորելով անձնային գործոններն ինտելեկտուալ, հուզական, հաղորդակցական և միջանձնային փոխազդեցությունների առանձնահատկությունների՝ կարելի է փաստել, որ հուզական բաղադրիչների դրսևորման առկայությամբ, արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության և նրանց կողմից հասարակությանը տրվող տեղեկատվության միջև կա փոխազդեցություն: 5.Հատուկ մշակված և կազմակերպված «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» ծրագրի ուսուցողական պարապմունքները հետապնդում են երկու նպատակ. ա) իրենց համակարգվածությամբ նպաստում են արտակարգ իրավիճակներում աշխատող և տեղեկատվություն ապահովող լրագրողների հոգեբանական պատրաստվածությանը, ինչը ենթադրում է դրական հուզական վերաբերմունք և հասարակության հետ համագործակցության հարմարվողականության, փոխզիջման, փոխադարձ ընդունելի վարքի ռազմավարության դրսևորում, բ)ապահովում են արտակարգ իրավիճակներում աշխատող և տեղեկատվություն ապահովող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածությունը:

Հետազոտության ընտրակազմը, անցկացման փուլերը և ժամկետները: Հետազոտությունը կատարվել է 2011-2016թթ. ժամանակահատվածում և ներառում է տրամաբանորեն կապակցված հետևյալ երեք փուլերը.

1.Պրոբլեմային-որոնողական փուլ (2011-2013 թթ.): Այս փուլի հիմնական նպատակը եղել է հետազոտության սկզբնական չափանիշների, գիտական ապարատի հստակեցումը՝ նպատակի, խնդիրների ձևակերպում, տեղայնացում, տեսական և փորձարարական նյութի և հետազոտության մեթոդների նկատմամբ մեթոդաբանական մոտեցումների հիմնավորում, հիմնախնդրին վերաբերող գրականության ուսումնասիրություն: Արդյունքը հետազոտության հիմնախնդրի, նրա հիմնական ուղղությունների որոշարկումն էր, հիմնական հասկացությունների համակարգի կառուցումը, վարկածի ձևակերպումը:

2.Համակարգման փուլ (2013-2015թթ.): Ուսումնասիրվել, բացահայտվել և վերլուծվել են արտակարգ իրավիճակներում լրագրողական գործունեության հիմնական ուղղությունները, հոգեբանական կողմերը, հոգեբանական պատրաստության անհրաժեշտ մակարդակները, տեղեկատվության լուսաբանման հոգեբանական ազդեցության ձևերը, միջոցներն ու մեխանիզմները: Այս փուլում մշակվել և տեսականորեն համակարգվել են արտակարգ իրավիճակներում լրագրողների աշխատանքի հոգեբանական առանձնահատկությունները, հոգեբանական պատրաստության հիմնական ուղղությունները և իրականացվել են հետազոտական-փորձարարական աշխատանքները: Հետազոտական-փորձարարական

աշխատանքները կազմակերպվել են հետևյալ հիմնական փուլերով՝ հավաստող, ստուգողական և ձևավորող: Հետազոտությանը մասնակցել է 127 մարդ: 3.Արդյունքների ընդհանրացման փուլ (2015-2016թ):Այս փուլում համակարգվել, ընդհանրացվել և գնահատվել են հետազոտության արդյունքները, ստուգվել են առաջադրված դրույթները: Արդյունքները ընդհանրացվել են գիտական հրապարակումներում,գիտական զեկուցումների տեսքով ներկայացվել գիտաժողովներում, ամբիոնային սեմինարներում, ավարտական տեսքի է բերվել ատենախոսության գիտական ձևակերպումը, մշակվել է «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» դասընթացի ծրագիրը:

Հետազոտության փորձաքննությունը կատարել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կիրառական հոգեբանության և Հոգեբանության ամբիոններում, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի խորհրդում: Ստացված արդյունքների մասին զեկուցվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովում, 19.11.2012թ: Նյութը տպագրվել է «Տրավմատիկ իրադարձությունների ազդեցությունը լրագրողների հոգեվիճակի վրա» ժողովածուում: 2015 թվականի հոկտեմբերին «Առավոտ» օրաթերթի, իսկ նոյեմբերին «Ա1+»-ի լրագրողների համար անցկացվել են սեմինարներ: Կազմակերպվել և իրականացվել են hetq.am կայքի լրագրողների հոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված պարապմունքներ:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, 18 աղյուսակից, 6 գծապատկերից, գրականության ցանկից, հավելվածներից: Ընդհանուր ծավալը 205 համակարգչային էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, նպատակից բխող հետազոտական խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, փորձաքննությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքի *առաջին*՝ ***«Լրագրողական գործունեության առանձնահատկությունները արտակարգ իրավիճակների պայմաններում»*** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ «*Արտակարգ իրավիճակ հասկացությունը և առանձնահատկությունները*», ներկայացվում է արտակարգ իրավիճակ հասկացությունը և նրա առանձնահատկությունները, արտակարգ իրավիճակներում անձի հարմարման, կոնֆլիկտների, հոգեկան կայունության, տագնապայնության, կոնֆլիկտների դրսևորումների վերաբերյալ տարբեր մասնագետների մոտեցումները: Երկորրդ ենթագլխում՝ «*Լրագրողների գործունեությունը արտակարգ իրավիճակի պայմաններում (իրավական կողմ)*», ներկայացված է արտակարգ իրավիճակներում լրագրողների գործունեության իրավական կողմերը, լրագրողական էթիկայի նորմերը, վարքականոնները,

սկզբունքները:Երրորդ՝ «*Ռազմական հակամարտությունների, ահաբեկչական գործողությունների և արտակարգ իրավիճակների գոտում լրագրողների գործունեության սոցիալ-հոգեբանական բնութագիրը (արտասահմանյան և տեղական փորձ)*» ենթագլխում ներկայացված է ռազմական հակամարտության գոտում աշխատող լրագրողների պաշտպանության խնդիրները միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում, ռազմական հակամարտությունների, ահաբեկչական գործողությունների,արտակարգ իրավիճակների գոտում լրագրողների գործունեության սոցիալ-հոգեբանական բնութագիրը (արտասահմանյան,տեղական փորձ):

Երկրորդ գլուխը՝ ***«Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի հոգեբանական պատրաստվածության աստիճանի փորձարարական հետազոտությունը»,*** կազմված է երեք ենթագլխից:

Առաջին՝ «*Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի հոգեբանական պատրաստվածության աստիճանի որոշման հետազոտության կազմակերպումն ու մեթոդիկան*» ենթագլխում ներկայացված է արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի հոգեբանական պատրաստվածության աստիճանի որոշման հետազոտության կազմակերպումն և մեթոդիկաների ընտրության մեխանիզմը: Փորձարարական հետազոտությունն անց է կացվել ՀՀ տարբեր սահմանամերձ տարածաշրջաններում և Լեռնային Ղարաբաղի տարածքում արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հետ, ովքեր գործունեություն են ծավալել, կամ մասնակից են եղել կոնկրետ իրավիճակների: Հետազոտությունն անցկացվել է երկու փուլով: Առաջինն անց է կացվել որոշելու համար արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային որակները: Երկրորդ փուլում՝ ախտորոշման ընթացքում, հստակեցվել է որակների արտահայտվածության և հոգեբանական պատրաստվածության աստիճանները, համեմատական վերլուծությունը: Հետազոտության խնդիրը համակողմանիորեն ուսումնասիրելու համար հիմք է ընդունվել մի քանի սկզբունքներ, որոնք պահպանվել են հետազոտության ընթացքում. կիրառված մեթոդները, առաջադրանքները չեն ազդել լրագրողների արժանապատվության վրա, պահպանվել է փոխադարձ հարգանք, մեթոդները տեղեկատվության առումով վերալրացվել են, բոլոր փորձարկվողների հետ աշխատանքն իրականացվել է նույն մեթոդներով և մեթոդիկաներով, որը հնարավորություն է տվել տարբեր մակարդակներում միմյանց հետ համեմատել նույնատիպ տվյալներ: Հետազոտության ընթացքում կիրառվել են Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան»(16-PF), «Ինքնագնահատման ախտորոշման Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի մեթոդիկան», Ա.Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան», Թեյլորի «Տագնապախոռովության չափման» մեթոդիկան: Վերոնշյալ մեթոդներն առաջարկված հարցաթերթիկի հետ լիովին բացահայտել են արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության, ինչպես նաև տեղեկատվությունը լուսաբանող լրագրողների վրա հոգեբանական ազդեցության ու նրանց կողմից հասարակությանը տրվող ինֆորմացիայի փոխազդեցությունը և հոգեբանական դրսևորման առանձնահատկությունները: Մեթոդիկաների կիրառման առաջին փուլում կատարվել են առանձին խմբային ուսումնասիրություններ, երկրորդ փուլում համեմատվել են տարբեր խմբերի միջինացված արդյունքներն ըստ ցուցանիշների:

Երկրորդ գլխի երկրորդ՝ *«Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության հետազոտության արդյունքները»* ենթագլուխում հետազոտության մեթոդներին համապատասխան կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում ստացվել են ինչպես անհատ փորձարկվողների, այնպես էլ փոքր խմբերի միջինացված տվյալները՝ լրագրողի հոգեբանական պատրաստվածության անհրաժեշտության վերաբերյալ: Կիրառված մեթոդիկաների արդյունքները ներկայացված են աղյուսակների և գծապատկերների ձևով, որոնք առավել ակնառու են դարձնում արձանագրված ցուցանիշները: Ռ.Քեթթելի մեթոդիկայի կիրառման ընթացքում նախ պարզվել է տվյալ խմբում առկա գործոնների արտահայտվածությունը, այնուհետև կազմվել է յուրաքանչյուր գործոնի միջինացված տվյալը՝ նկատի ունենալով, որ այդ գործոններն ի հայտ են գալիս փոխազդեցության արդյունքում: Այնուհետև համեմատվել է՝ երևույթի կամ իրադարձության արդյունքում ձևավորած առանձին խմբերի միջինացված տվյալները տալու նպատակով: Ստորև ներկայացված գծապատկերից պարզ է դառնում, որ համեմատաբար բարձր է A- շփվողականությունը, որը հասնում է 17.92%-ի: Ավելի բարձր ցուցանիշներ են գրանցվել F- արտահայտչականություն սանդղակով՝ 19.52%, բարձր է նաև O- ինքնավերահսկողությունը՝ 13.2%: Արդյունքներն ամփոփենք՝ հիմք ընդունելով թեստային համակարգում տեղ գտած գործոնները՝ առավելագույն արտահայտվածության չափով: Բացի B՝ ինտելեկտի գործոնից, որի առավելագույն արժեքը, ըստ թեստի, 8 է և MD-ից՝ ինքնագնահատականի համարժեքություն, որի գործոնը 14 է, մնացած 15 գործոնների առավելագույն արժեքը 12-ն է:(տես՝ գծապատկեր 1): Գծապատկեր1

Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան»



Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության, ինչպես նաև տեղեկատվությունը լուսաբանող լրագրողների վրա հոգեբանական ազդեցության ու նրանց կողմից հասարակությանը տրվող ինֆորմացիայի փոխազդեցության դրսևորումների բացահայտման համար նախընտրելի ենք համարել օգտագործել «Ա. Բասսի և Ա.Դարկի Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման» մեթոդիկան: Այս մեթոդը նույնպես կիրառվել է արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության և արտահայտված ագրեսիաների տիպերի բացահայտման գործընթացում:Գրանցված արդյունքների հիման վրա նույնպես կազմվել է միջինացված տվյալների աղյուսակ (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ցուցանիշների արտահայտվածության աստիճան		Գործոններ	Տոկոսային արտահայտվածություն
ա) Թույլ արտահայտված գործոններ	1	Նեգատիվիզմ	35.2%
	2	Վիրավորվածություն	35.2%
	3	Անուղղակի ագրեսիա	39.6%
	4	Կասկածամտություն	42%
բ) Միջին արտահայտվածության գործոններ	5	Ֆիզիկական ագրեսիա	45%
	6	Նյարդայնություն	48.4%
գ) Ընդգծված արտահայտվածության գործոններ	7	Մեղքի զգացում	66.6%
	8	Խոսքային ագրեսիա	68%

Ա. Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա»-յի միջինացված տվյալներ (%) ըստ արտահայտվածության աստիճանի

Ինչպես երևում է աղյուսակ 1-ում ցուցանիշների համեմատությունից՝ արտակարգ իրավիճակներում տեղեկատվությունը լուսաբանող լրագրողների սոցիալ-հոգեբանական ազդեցության ու նրանց կողմից հասարակությանը տրվող ինֆորմացիայի փոխազդեցության գործընթացում լրագրողի տագնապայնության ազդեցությունը պարզելու համար խոսքային ագրեսիայի ստացված ցուցանիշները տատանվում են 66.6%- 68%, այսինքն ուսումնասիրվող խմբերում բավականին ուժեղ է արտահայտված մեղքի զգացումը և խոսքային ագրեսիան:

Արտահայտված (35.2%-42%) գործոններն են նեգատիվիզմը, վիրավորվածությունը, անուղղակի ագրեսիան և կասկածամտությունը:Միջին արտահայտվածության գործոնների ցուցանիշները տատանվում են 45%- 48.4%: Այդ գործոններն են նյարդայնությունն ու ֆիզիկական ագրեսիան: Բարձր արտահայտված կամ ընդգծված գործոններն են խոսքային ագրեսիան՝ 68% և մեղքի զգացումը՝ 66.6%է: Առավել վառ գործոնների արտահայտվածությունը երևում է գծապատկերից (տես՝ գծապատկեր 2):

Արտակարգ իրավիճակներում տեղեկատվությունը լուսաբանող լրագրողների սոցիալ-հոգեբանական ազդեցության ու նրանց կողմից հասարակությանը տրվող ինֆորմացիայի փոխազդեցության գործընթացում անձի տագնապայնության ազդեցությունը պարզելու համար կիրառվել է Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի՝ «Ինքնագնահատման ախտորոշման մեթոդիկա» -ն: Արդյունքները չեն տարբերակվել

ըստ ցուցանիշների թույլ, միջին և բարձր արտահայտվածության, ինչը հստակ երևում է աղյուսակ 2 ում:

Գծապատկեր 2



Ա.Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա»-ի միջինացված տվյալներ (%)

Աղյուսակ 2

	Ռեակտիվ տագնապայնություն	Անձնային տագնապայնություն
A	60	88
B	72	92
C	76	86
D	82	80
E	76	88
Միջինացված տվյալներ	73.2	86.8

«Ինքնագնահատման ախտորոշման Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի մեթոդիկա»-ի միջինացված ցուցանիշներ (%),

Թեյլորի «Տագնապախռովության չափման» մեթոդիկայի հարցարանը բաղկացած է 50 պնդումից: Կիրառվել է ՀՀ սահմանամերձ՝ ա) Տավուշ-Նոյեմբերյան-Իջևան-Բերդ բ) Վայոց Ձոր- Խաչիկ, գ) Սյունիք-Սիսիան և ԼՂՀ ա) Մարտակերտ–Մատաղիս, բ) Քարվաճառ տարածաշրջանների ազգաբնակչության սոցիալ-հարմարման և հոգեկան վիճակների ախտորոշման համար: Մասնակցել է 104 մարդ, որից 64 իգական և 40 արական սեռի ներկայացուցիչ: Թեյլորի «Տագնապախռովության չափման մեթոդիկայի» թեստի արդյունքները արտահայտված են տոկոսներով, ինչը երևում է աղյուսակ 3-ում և գծապատկեր 3-ում:

Աղյուսակ 3

Միավորներ	Մասնակիցների քանակ	
0-5 միավոր՝ ցածր մակարդակ	*11*	*11,4%*
5-15 միավոր՝ ցածր միտումով միջին մակարդակ	23	23,92%
15-25 միավոր՝ բարձր միտումով միջին մակարդակ	*52*	*54,08%*
25-40 միավոր՝ բարձր մակարդակ	*18*	*18,72%*
40-50 միավոր ՝ խիստ բարձր մակարդակ	*0*	*0*
ԸՆԴԱՄԵՆԸ	*104*	

Թեյլորի "Տագնապախոռովության չափման մեթոդիկա

Երրորդ «Հետազոտության արդյունքների սոցիալ-հոգեբանական վերլուծությունը (հավաստող գիտափորձ)» ենթագլխում վերլուծվել ենք ստացված արդյունքները և ցուցանիշներն՝ըստ արտահայտվածության տարբեր աստիճանի:
Քանի որ հետազոտական խմբերը տարբեր են եղել, անհրաժեշտ ենք համարել կազմել միջինացված տվյալներ արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանական առանձնահատկությունների մասին պատկերացում կազմելու համար:

Ակնհայտորեն պարզ է, որ անիմաստ է որոշ հատկանիշների համար կազմել միջինացված տվյալ: Դրանով հանդերձ՝ այդ գործոնները ներքնապես կապված են միմյանց հետ ոչ միայն այն պատճառով, որ դրանք ուղղված են անձի ուսումնասիրմանը, այլև պատկերացում են տալիս արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության, ինչպես նաև տեղեկատվությունը լուսաբանող լրագրողների վրա հոգեբանական ազդեցության ու նրանց կողմից հասարակությանը տրվող ինֆորմացիայի փոխազդեցության, հոգեբանական դրսևորման առանձնահատկությունների և վարքային դրսևորումների մասին: Հիմք ընդունելով այս դատողությունը՝ փորձել ենք կապ հաստատել երեք խումբ տվյալների միջև, որոնք արձանագրվել են նախորդ ենթագլխում: Հիշյալ արդյունքները ներկայացվել են մեկ աղյուսակով (տես աղյուսակ 4-ում):

Աղյուսակ 4-ից երևում է, որ կիրառված մեթոդիկաների ստացված տվյալները բաժանել ենք երեք խմբի՝ ըստ արտահայտվածության աստիճանի (ցածր, միջին, ընդգրկված): Վերոհիշյալ համեմատությունը և խմբավորումը հնարավորություն տվեց կապ հաստատելու թույլ, միջին և ընդգրկված արդյունքների միջև և մոտավոր պատկերացում ստանալու առանձին խումբ ցուցանիշների միջև:

Առանձնացվել են այն հիմնական գործոններն ու հատկանիշները, որոնք առավել բարձր են և, ըստ վարկածի, արտակարգ իրավիճակներում աշխատող և տեղեկատվություն հաղորդող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության անհրաժեշտ մակարդակն ապահովելու համար նպատակահարմար ենք համարում հետագայում մեր կողմից մշակվող շտկողական աշխատանքներում արտահայտված գործոնները նվազեցնել, իսկ մյուս գործոնները որոնք թույլ են արտահայտված, սակայն բնութագրում են լրագրողներին՝ բարձրացնել:



Թեյլորի տագնապախռովության չափման մեթոդիկայով ստացված արդյունքներ

Վերլուծության արդյունքում, երբ համադրում ենք միջինացված արդյունքները, գալիս ենք հետևյալ եզրահանգումների .

ա) Ռ.Քեթթելի Q2 -զիջողականության, L-դյուրահավատություն, Q4 – թուլացվածություն, թույլ արտահայտվածության գործոնները համարժեք են Ա. Բասսի և Ա. Դարկի վիրավորվածության, նեգատիվիզմի,անուղղակի ագրեսիայի, կասկածամտության, Թեյլորի «Տագնապախռովության չափման մեթոդիկայի» 0-5 միավոր ցածր մակարդակ ունեցողների ցուցանիշների հետ:

բ) Ռ.Քեթթելի անձնային N-ուղղամտություն, E-գերակշռություն, Q1 -ռադիկալիզմ, O-տագնապայնություն, C-հուզական անկայունություն, M-զարգացած երևակայություն,I-զգայունություն, G-նորմատիվություն, H-խիզախություն գործոնների միջին արտահայտվածության ցուցանիշներն ընդհանրացված են Ա.Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկայի» ՝ ֆիզիկական ագրեսիայի, նյարդայնության, Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի «Ինքնագնահատման ախտորոշման մեթոդիկայի»՝ռեակտիվ տագնապայնության, Թեյլորի «Տագնապախռովության չափման» մեթոդիկայի ցածր միտումով միջին մակարդակից (5-15 միավոր) մինչև բարձր միտումով միջին մակարդակ (15-25 միավոր) արդյունքների հետ:

գ) Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկայի» անձնային Q3-ցածր ինքնահսկողություն,A-շփվողականություն, F-արտահայտչականություն գործոնների բարձր արտահայտվածության ցուցանիշները ընդհանրացված են Ա.Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման

մեթոդիկայի»՝խոսքային ագրեսիայի,մեղքի զգացման, Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի «Ինքնագնահատման ախտորոշման մեթոդիկայի»՝անձնային տագնապայնության, Թեյլորի «Տագնապախռովության չափման» մեթոդիկայի բարձր մակարդակի (25-40 միավոր) արդյունքների հետ:

Երրորդ՝ ***«Արտակարգ իրավիճակների պայմաններում մասնագիտական խնդիրների լուծմանը լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ապահովման ուղիներն ու միջոցները»*** վերնագրված գլխի առաջին՝ *«Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ապահովման ուղիները»* ենթագլխում ներկայացված է արտակարգ իրավիճակներում գործած լրագրողների վերլուծությունները, ինչի արդյունքում մեր կողմից տրվել է արտակարգ իրավիճակների պայմաններում մասնագիտական խնդիրների լուծմանը լրագրողների հոգեբանական պատրաստության համակարգը:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված է *«Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» ծրագիրը (ձևավորող գիտափորձ)*:

Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ապահովումը ենթադրում է առաջին հերթին մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակության մեջ առանձնացնել հատուկ և կամընտրական դասընթացներ, որոնց հիմնական նպատակը կլինի ապագա լրագրողներին սոցիալ-հոգեբանական գիտելիքների հաղորդումը, արտակարգ իրավիճակներում աշխատելիս անհրաժեշտ ինքնակարգավորման, ինքնակառավարման, ռիսկերի նվազեցման հմտությունների ձևավորումը: Այդ նպատակով մեր տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակել և ներկայացրել ենք «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» ծրագիրը:

Երրորդ՝գլխի երրորդ «*Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ռեթեսթավորման արդյունքները (սփուգիչ գիտափորձ)*» ենթագլխում դիտարկվել են արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության, տեղեկատվությունը լուսաբանող լրագրողների վրա հոգեբանական ազդեցության ու նրանց կողմից հասարակության տրվող ինֆորմացիայի փոխազդեցության արդյունքները «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» ծրագրի կիրառումից հետո:

Այնուհետև անցկացվել է ռեթեստավորման գործընթաց անձնային գործոնների էական տեղաշարժերը արձանագրելու համար:

Ռեթեստավորման արդյունքում ստացված մեթոդիկաների տվյալները նույնպես խմբավորել ենք թույլ, միջին, բարձր կամ ընդգծված արտահայտվածությամբ և ներկայացրել ենք մեկ ընդհանուր աղյուսակ 5-ում:

Հավաստող գիտափորձի և ռեթեստավորման արդյունքում գրանցված տվյալները ցույց են տալիս մի շարք փոփոխություններ, ինչպես բարձր և ցածր արտահայտվածության

սանդղակում, այնպես էլ բևեռային անցումներում, երբ մի գործոնը վերաճում է հակառակ գործոնի:

Աղյուսակ 4

	Ռ.Քեթթելի “Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան” (16-PF)		Ա.Բասսի և Ա.Դարկի “Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա”		Ինքնագնահատման ախտորոշման Չ.Դ.Սպիլբերգերի և Յու.Լ. Խանինի մեթոդիկա		Թեյլորի “Տագնապախռովության չափման մեթոդիկա “	
Ա Ցածր	L Դյուրահավ.	7.28%	Նեգատիվ.	35.2%.	0		11 (անհատ) 11.4 %	0-5 միավոր ցածր մակարդակ
	Q4 Թուլացված.	10.72%.	Վիրավորվ.	35.2%.				
	Q2 Ձիջող.	10.88%.	Անուղղակի ագրեսիա	39.6%				
			Կասկած.	42%.				
Բ միջին արտահայվածություն	N Ուղղամտութ.	11.52%.	Ֆիզիկական ագրեսիա	45%	Ռեակտիվ դրսևորություն	36.6%	23(անհատ) 23,92 %	5-15 միավոր ցածր միտումով միջին մակարդակ
	E Գերակշռութ.	13.08%						
	Q1 ռադիկալիզմ	13.28%						
	O Տագնապայնութ.	13.2%.						
	C Հուզական անկայունություն	13.52%	նյարդայնություն	48.4%			52 (անհատ) 54,08%	15-25 միավոր՝ բարձր միտումով միջին մակարդակ
	M Զարգացող երևակայությոտ	13.92%						
	I զգայունություն	15.04%						
	G Նորմատիվ.	15.36%.						
	H Խիզախութ.15.44%	15.44%						
Գ ընդգծված	Q3 Բարձր ինքնավերահսկող>	17.28%	Խոսքային ագրեսիա	66.6%	Անձնային դրսևորություն	43.4%	18 (անհատ) 18, 72%	25-40 միավոր՝ բարձր մակարդակ
	A Շիվողական.	17.92%	Մեղքի զգացում	68%			0	40-50 միավոր՝ խիստ բարձր մակարդակ
	F արտահայտչ.	19.52%						
	B ինտելեկտ	6.24%						
	MD Ինքնագնահատ.	39.76%						

Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդիկաների միջինացված տվյալների ընդհանրացված պատկեր (%)

	Ռ.Քեթթելի 'Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան' (16-PF)		Ա.Բասսի և Ա.Դարկի 'Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա'		Ինքնագնահատման ախտորոշ-ման Զ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի մեթոդիկա	
Ա Ցածր մոտիվացիոն ոլորտ	L Դյուրահավ.	9.08%	Նեգատիվ.	15.9%	0	
	Q4 Թուլացած.	11.7%	Վիրավորվ..	16.6%		
	Q2 Հիջող.	11.34%	Անուղղակի ագրեսիա	27.2%		
			Կասկած.	32.2%		
Բ միջին արտահայտվածություն	N Ուղղամտութ.	13.28%	Ֆիզիկական ագրեսիա	20.7%	Ռեակտիվ տրամադրություն	86.6%
	E Գերակշռութ.	11.52%				
	Q1 ռադիկալիզմ	11.32%				
	O Տագնապայն.	16.24%				
	C Հուզական անկայուն.	15.56%	Նյարդայնություն	34.16%		
	M Զարգացող երևակայութ.	16.47%				
	I զգայություն	13.08%				
	G Նորմատիվ.	16.47%				
	H Խիզախ.	17.74%				
Գ ընդգծված էքստրավերտիրատ ոլորտ	Q3 Բարձր ինքնավերահ.	18.3%	Խոսքային ագրեսիա	32.6%	Անձնային դյուրաբեկությունը	71.4%
	A Շփվող.	18.48%	Մեղքի զգացում	44.32%		
	F արտահայտչ.	20.12%				
	B ինտելեկտ.	7.05%				
	MD ինքնագնահ.	41.24 %				

Ռեթեստավորման արդյունքում գրանցված միջինացված տվյալների ընդհանրացված պատկեր (%)

Տեսական և փորձարական հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունը, դրանց մեկնաբանումը և սընդհանրացումը հնարավորություն տվեց հանգելու հետևյալ **եզրակացություններին.**

1. Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունները և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության հիմնահարցը դեռևս ունի ուսումնասիրման անհրաժեշտություն, քանի որ ՀՀ-ում լրագրողական դաշտում հիշյալ գործունեության համակարգն առաջադրում է հոգեբանական տարաբնույթ պահանջներ, որոնք իրենց հերթին ծնում են որոշակի հոգեբանական դժվարություններ, հակասություններ արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների փոխհարաբերություններում, տեղեկույթի տրամադրման և սոցիալ-հարմարման գործընթացում:Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունները և սոցիալ-հոգեբանական պատրաստվածությունը կապված է անձնային գործոնների և վարքային դրսևորումների հետ, որոնք ազդում են սուբյեկտի փոխազդեցության, սոցիալական վարքի և դրանց դրսևորումների վրա:

2.Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության, նրանց կողմից հասարակությանը տրվող տեղեկատվության ազդեցության, իրավիճակային պայմանների և վարքի կարգավորման ընտրված ռազմավարության միջև կա որոշակի կախվածություն:

3.Խմբավորելով անձնային գործոններն ըստ ինտելեկտուալ, հուզական առանձնահատկությունների, հաղորդակցական և միջանձնային փոխազդեցությունների առանձնահատկությունների՝ կարելի է փաստել, որ ամենաբարձր ցուցանիշն արտահայտվում է հուզական բաղադրիչների դրսևորման առկայությամբ, որոնք գերակա դեր են կատարում արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության և նրանց կողմից հասարակությանը տրվող տեղեկատվության ազդեցության գործընթացում:Գիտափորձից պարզվում է, որ ագրեսիայի դրսևորման ցուցանիշները (մասնավորապես՝ խոսքային ագրեսիան, մեղքի զգացումը, նյարդայնությունը, անձնային տագնապայնությունը, ինքնագնահատականի տատանվող սանդղակի ցուցանիշները) նույնպես բարդացնում են արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների գործունեությունը, դժվարացնում հասարակությանը տրվող ինֆորմացիայի հաղորդման գործընթացը՝ հանգեցնելով սյուբյեկտների մոտ տագնապայնության աստիճանի փոփոխության:

4.Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ընդգծված արտահայտված շփվողականությունը, արտահայտչականությունը և միջին արտահայտված դրսևորումներն անմիջականորեն կապվում են անձնային մի շարք գործոնների՝ ինչպես նաև նյարդայնության վառ արտահայտված ցուցանիշների հետ, որոնք առաջացնում են խոսքային ագրեսիա և բարձրացնում մեղքի զգացողությունը:

5.Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների ոչ համարժեք գնահատականը, սոցիալ-հոգեբանական պատրաստվածության անբավարար իմացությունը հանգեցնում են նյարդայնության, անձնային և ռեակտիվ տագնապայնության, վերբալ և ոչ վերբալ ագրեսիայի՝ բարձրացնելով

արտահայտչականության, վերահսկողության և մեղքի զգացումի անձնային գործոնների ցուցանիշները:
6.Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ծրագրի իմացությունը հնարավորություն է տալիս ելքեր և ուղիներ տնել: Ուսուցողական պարապմունքների կազմակերպումը և անձնային որոշ գործոնների արտահայտվածության բարձրացումը և որոշների նվազումն որոշակիորեն ազդում են լրագրողների անձնային հարմարման, համագործակցության, փոխզիջման որակների վրա: Մյուս կողմից, ընդհանուր առմամբ, գիտելիքի իմացությունը նվազեցնում է լրագրողների և հասարակության փոխհարաբերություններում ավելորդ լարվածության ստեղծելու միտումները:
7.Ստուգիչ գիտափորձը կամ ռեթեստավորումը ցույց տվեց, որ հոգեախտորոշման գործընթացում բացահայտված որոշ գործոններ ենթակա են շտկման՝ ծրագրով նախատեսված գիտելիքների յուրացման ուսուցման գործընթացում, որով կարելի է պնդել գիտական վարկածի, նպատակի, կիրառված հոգեբանական գործիքների հավաստիությունը արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության գործում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում.

1. Մարկոսյան Դ.Հ. «Անձի աուտոագրեսիվ վարքագծի ուսումնասիրման հոգեբանական ասպեկտները» - ՀՊՄՀ գիտական տեղեկագիր 2013 (N 1-/18) էջ 24-33
2. Մարկոսյան Դ.Հ. «Տրավմատիկ իրադարձությունների ազդեցությունը լրագրողների հոգեվիճակի վրա- Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ 90 ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու– 2014 էջ 437-441
3. Մարկոսյան Դ.Հ. «Արտակարգ իրավիճակներում ամբոխի կազմում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածությունը որպես անվտանգության գրավական» Գիտական տեղեկագիր 2016 N 1-2 (26-27) էջ 83-91
4.ՄարկոսյանԴ.Հ.«Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի հոգեբանական պատրաստվածության աստիճանի փորձարարական հետազոտությունը» Գիտական տեղեկագիր-2016 N 1-2 (26-27) էջ 103-111
5.Մարկոսյան Դ.Հ.«Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի հոգեբանական պաշտպանության մեխանիզմները» Գիտական տեղեկագիր 2016 N 3-4 (28-29) էջ 69-75
6. Մարկոսյան Դ.Հ. «Տեղեկատվության ընկալումը և մատուցումը լրագրողի կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում» Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ- Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես 2017-(1) էջ 139-144:

МАРКОСЯН ДИАНА ОВИКОВНА

ПРОБЛЕМА СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ПОДГОТОВЛЕННОСТИ ЖУРНАЛИСТА, РАБОТАЮЩЕГО В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03 – «Социальная психология (межличностные отношения, семейная, возростная, педагогическая,групповая деятельность)» Защита диссертации состоится 25 мая 2017 года в 12.00 на заседании специализированного совета 064 ВАК при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна (0010, г. Ереван, Тигран Меци 17).

РЕЗЮМЕ

Актуальность темы. Чрезвычайные ситуации не только нарушают нормальное развитие общества, но также могут глубоко воздействовать на отдельные слои общества, подвергая опасности физическое и психическое здоровье населения. В связи с этим необходима разработка системы психологической подготовки журналистов. Психологическая подготовленность очень важна, в первую очередь, для сохранения здоровья и гармоничного психического состояния журналистов, поскольку нередко при работе в трагических ситуациях они нуждаются в психологической помощи. Актуальность выбранной темы обусловлена также с точки зрения применения компетентностного подхода к образовательным программам по специальности «Журналистика».

Цель исследования: исследование уровня психологической подготовленности журналиста, работающего в чрезвычайных ситуациях, определение путей, разработка системы форм и средств ее повышения.

Целью и гипотезой исследования определяются следующие задачи: исследование и сравнение процессов и механизмов психологической подготовки журналистов, работающих в чрезвычайных ситуациях за рубежом и в РА; исследование последствий психологического воздействия работы в чрезвычайных ситуациях на журналистов; выявление связи психологической подготовленности журналистов, работающих в чрезвычайных ситуациях, и психического воздействия освещаемой ими информации на население; выявление психологических проблем, возникающих в работе журналистов, сотрудничающих в печатных, электронных средствах массовой информации и на телевидении, и исследование их особенностей; разработка программы курса психологической подготовки для журналистов, работающих в условиях чрезвычайных ситуаций.

Научная новизна исследования: впервые в сфере журналистики по-новому освещены проблемы психологической подготовленности журналистов, работающих в чрезвычайных условиях; исследовано психологическое воздействие чрезвычайных ситуаций на журналистов. Выявлено психологическое воздействие на население психологической подготовленности журналистов, работающих в условиях чрезвычайных ситуаций, и освещаемой ими информации; определены пути и разработана система форм и средств повышения уровня психологической подготовленности журналистов, работающих в условиях чрезвычайных ситуаций. Составлена программа

психологической подготовки журналистов, работающих в условиях чрезвычайных ситуаций.

Теоретическая значимость исследования обусловлена теоретическим развитием психологии социальных и чрезвычайных ситуаций. Впервые в нашей действительности на основании данных исследовательской работы выявлены и научно обоснованы необходимость, неотложность, особенности, принципы, методы психологической подготовки журналистов, работающих в чрезвычайных ситуациях, качественные и количественные показатели информации, ее социально-психологическая направленность. Особенности управления информацией в условиях чрезвычайной ситуации, их выявление и анализ могут служить в качестве необходимого учебного материала для студентов, обучающихся по специальности «Журналистика». Это готовый анализ для занимающихся исследованием проблематики психологии социальных и чрезвычайных ситуаций и процесса подготовки журналистов.

Практическая значимость исследования. Разработанная на основе результатов проведенных исследований программа вузовского курса «Социально-психологическая подготовка журналиста, работающего в чрезвычайных ситуациях» будет содействовать обеспечению и повышению уровня психологической подготовленности выпускников вузов или средних специальных учебных заведений по специальности «Журналистика» и уже осуществляющих журналистскую деятельность специалистов, изменению методологии журналистской работы в условиях чрезвычайных ситуаций, повышению уровня стрессоустойчивости работающих в таких условиях журналистов.

Надежность и достоверность результатов исследования обеспечены современными методологическими принципами психологических исследований, использованием соответствующих предмету, цели и задачам исследования взаимодополняющих методов. Апробация и внедрение основных результатов исследования были осуществлены на втором и третьем этапах экспериментальной работы. Основные положения кандидатской диссертации были представлены и обсуждены на республиканских и международных научных конференциях, на заседаниях кафедры развития и прикладной психологии Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, где получили положительную оценку.

Апробация исследования проводилась на кафедрах психологии, развития и прикладной психологии Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, на совете факультета психологии образования и социологии. Полученные результаты были представлены на конференции, посвященной 90-летию АГПУ им. Х. Абовяна (19.11.2012 г.)В октябре 2015 года был проведен семинар для журналистов газеты «Аравот», а в ноябре того же года – для журналистов A1+. Были организованы и проведены занятия, направленные на повышение уровня психической подготовки, для журналистов сайта hetq.am.

Структура диссертации. Работа состоит из введения, 3 глав, заключения, списка использованной литературы, приложений. Содержит 18 таблиц, 6 схем.

Diana H. Markosyan

SOCIAL AND PSYCHOLOGICAL FORMATION ISSUES AMONG JOURNALIST WORKING IN EMERGENCY SITUATIONS

Thesis submitted for the Degree of Candidate of Psychological Sciences in the field of expertise: 19.00.03 "Social Psychology, (Interpersonal relationship, Family, Age, Pedagogical, and Group activities)". The official (public) defence of the thesis will take place at Higher Attestation Commission's 064 Degree-awarding Scientific Council's session on May 25, 2017, at 12:00 at Khachatur Abovian Armenian State Pedagogical University (ASPU)(Address: 0010 Yerevan, Tigran Mets 17).

SUMMARY

Actual relevance of the research. Emergency situations can not only disrupt the natural pace of development of societies, but they may also leave a deep trace on some social layers, thus, jeopardising their physical and psychological well-state. The psychological formation of people dealing directly with the public in emergency situations is highly important in this regard. Accordingly, there is an obvious need for creating psychological training system for journalists. Psychological trainings are particularly crucial, first of all, for ensuring journalists' well-being and for maintaining their harmonious state of mind, as every now and then, under drastic circumstances, they appear in need of an appropriate psychological support. The subject-matter of research becomes even more significant from the perspective of further contribution to the competence-based approaches to the respective courses of journalism. The present study is grounded by social significance as the mastery and moral scope of journalists working in emergency situations is directly influencing the tension of social and psychological settings, targeting a healthy psychological milieu and positive outlook.

The aim of the research has been determined to study the level of psychological preparedness of journalists in critical situations and to develop the respective ways, methods and means to enhance the above-mentioned formations level.

The following **objectives** were drawn from the overall aim and hypothesis:

- to study and compare the processes and mechanisms of psychological trainings among emergency journalists both in the Republic of Armenia and abroad;
- to analyse the connections between the psychological impact on journalists' under emergency situations, and the influence of the information delivered by theme on society;
- to identify the psychological issues and their peculiarities detected within the realm of professional activities of printed, electronic media, and TV, henceforth, developing the psychological training programme for journalist working in emergency situations.

Scientific novelty of the research. The research is, actually, the first attempt in the sphere of local journalism to suggest a new standpoint for exploring into emergency journalists' psychological formation issues, as well as, into the impact of such situations. Similarly, the psychological training of journalists working in critical situations and the emotional impact of the information on the public, the system comprising ways, methods and means to raise the level of preparedness of journalists working in emergency situations have been identified. As a matter of fact, the explorations conducted have helped us to design a special psychological training programme for journalists working in emergency situations.

Theoretical value of the research is conditioned by the theoretical development of psychology of social and emergency situations. For the first time in the Armenian scientific reality, on the basis of the data generated through the research work, the necessity, exigency, peculiarities, principles, methods of psychological formation of journalists under emergency circumstances, as well as the pertinent qualitative and quantitative indicators of the information delivered and its socio-psychological relevance have been revealed and grounded on scholarly basis. The analysis of the particularity of information management, identification in emergency situations may serve as a useful educational material for journalism students. The research contains a complete analysis for further research activities aimed at courses on social and emergency situations psychology for journalists.

Practical meaning of the research: The curricular course "Social and Psychological Training for Journalists Working in Emergency Situations" developed on the research results will contribute to ensure the psychological formation and further advancement of the level of formation for university and specialised school graduates, as well as, for working journalists, changing the methodology of journalists' work under critical situations, and enhancing the level of stress resistance.

Research reliability and accuracy: The accuracy and validity of results obtained are ensured within the respective paradigm of modern methodological principles of psychological research, mutually complementary methods congruently applied to the research subject, aim, and objectives. The main results were attested and implemented on the second and third stages of the research work. The principal provisions of the thesis have been introduced at the official meetings of the Chair of Development and Applied Psychology of Khachatur Abovian Armenian State Pedagogical University, as well as, at national and international conferences, where they received favourable feedback.

The research expertise was carried out at the Chair of Applied Psychology and Chair of Psychology, at the Education Psychology and Sociology Faculty Council at Khachatur Abovian Armenian State Pedagogical University (ASPU). The results obtained were reported during the conference organized on the 90th anniversary of ASPU held on November 19, 2012. Moreover, in October 2015, a seminar was organized for the journalists of the Armenian newspaper "Aravot", and another seminar was held for the journalists of "A1+" New Agency in November, 2015. Additionally, training sessions aimed at raising the level of psychological preparedness of journalists of the Armenian on-line news portal Hetq.am was also designed and delivered.

The research structure: The paper consists of the Contents, Introduction, three chapters, and Conclusions, comprising 18 tables, 6 charts, as well as, Bibliography list/References, and Appendices.